# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/8

ք.Երևան

«15» հոկտեմբերի 2020թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ն , ի դեմս Ընկերության տնօրեն Լ. Բեգլարյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տեխնիկական ստուգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Յանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի ...

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1188000 (մեկ միլիոն հարյուր տասութ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 ...

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

**Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:**

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը

օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
900011054013
02647057
Էդգար Գևորգյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ
ք.Երևան, Ազատության պող. 24- 306
«ՀայԷկոնոմԲանկ» ԲԲԸ, Արաբկիրի մ/ճ,
163058801172
00144521
Լեոնիդ Բեգլարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1
«15» 10 2020թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/8 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության* | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Անվանում | Տեխնիկական բնութագիր | Քանակ | Չ/Մ | Նախահաշվային գին /ՀՀ դրամ/ | Մատուցման վայր | Մատուցման ժամկետ |
| տեխնիկական ստուգման ծառայություններ-1 **CPV՝ 71631100/3** | Գազասարքերի ծխատար խողովակների հավաքակցման, ծխատար ուղուն միացման օդափոխության և այրման համար անհրաժեշտ օդաքանակի ներհոսքի զննում, օդամղիչների և դրանց էլեկտրաշարժիչների աշխատանքի փաստացի վիճակի ստուգում, կաթսաների որմնապատվածքի կամ երեսվածքի, պայթեցման կափույրների, ձգափականների սարքինության ստուգում: Գազասպառիչ սարքերի և նրանց առանձին հանգույցների, չափիչ-հսկիչ սարքերի զննում, առկա օդափոխիչ սարքերի և ծխաօդատար ուղիների քարշի ստուգում: Տեխնիկական ստուգման եզրակացության, կամ ակտի տրամադրում: | 1 | դրամ | 396000 | ք. Երևան, Խորենացի 3<br>ք. Երևան, Խորենացի 7<br>ք. Երևան, Կոմիտաս 35<br>ք. Երևան, Իսակովի 10<br>ք. Երևան, Իսակովի 10 (3-րդ հարկ)<br>ք. Երևան, Ահարոնյան 12/3<br>ք. Երևան, Մանթաշյան 55<br>ք. Երևան, Շինարարների 3/1<br>ք. Երևան, Մոլդովական 41/3<br>ք. Երևան, Անդրանիկի 37/1<br>ք. Երևան, Հյուսիսային փ. 6 | Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում |
| տեխնիկական ստուգման ծառայություններ-2 CPV՝ 71631100/4 | Գազասարքերի ծխատար խողովակների հավաքակցման, ծխատար ուղուն միացման օդափոխության և այրման համար անհրաժեշտ օդաքանակի ներհոսքի զննում, օդամղիչների և դրանց էլեկտրաշարժիչների աշխատանքի փաստացի վիճակի ստուգում, կաթսաների որմնապատվածքի կամ երեսվածքի, պայթեցման կափույրների, ձգափականների սարքինության ստուգում: Գազասպառիչ սարքերի և նրանց առանձին հանգույցների, չափիչ-հսկիչ սարքերի զննում, առկա օդափոխիչ սարքերի և ծխաօդատար ուղիների քարշի ստուգում: Տեխնիկական ստուգման եզրակացության, կամ ակտի տրամադրում: | 1 | դրամ | 108000 | Շիրակի մարզ, ք.Գյումրի, Հովսեփյան 1<br>Շիրակի մարզ, ք. Գյումրի, Խորենացի 21<br>Շիրակի մարզ, գ. Բավրա, Գյումրի-Նինոծմինդա մայրուղի 63/4 | Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| տեխնիկական ստուգման ծառայություններ-3 CPV՝ 71631100/5 | Գազասարքերի ծխատար խողովակների հավաքակցման, ծխատար ուղուն միացման օդափոխության և այրման համար անհրաժեշտ օդաքանակի ներհոսքի զննում, օդամղիչների և դրանց էլեկտրաշարժիչների աշխատանքի փաստացի վիճակի ստուգում, կաթսաների որմնապատվածքի կամ երեսվածքի, պայթեցման կափույրների, ծգափականների սարքինության ստուգում: Գազապարիչ սարքերի և նրանց առանձին հանգույցների, չափիչ-հսկիչ սարքերի զննում, առկա օդափոխիչ սարքերի և ծխաօդատար ուղիների քարշի ստուգում: Տեխնիկական ստուգման եզրակացության, կամ ակտի տրամադրում: | 1 | դրամ | 144000 | Լոռու մարզ, ք. Վանաձոր, Վարդանանց 11<br>Լոռու մարզ, ք, Ալավերդի, Թումանյան 1ա<br>Լոռու մարզ, ք. Վանաձոր, Մոսկովյան 44<br>Լոռու մարզ, գ. Գոգավան, Գոգավանի մաքսային կետ | Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում |
| տեխնիկական ստուգման ծառայություններ-4 CPV՝ 71631100/11 | Գազասարքերի ծխատար խողովակների հավաքակցման, ծխատար ուղուն միացման օդափոխության և այրման համար անհրաժեշտ օդաքանակի ներհոսքի զննում, օդամղիչների և դրանց էլեկտրաշարժիչների աշխատանքի փաստացի վիճակի ստուգում, կաթսաների որմնապատվածքի կամ երեսվածքի, պայթեցման կափույրների, ծգափականների սարքինության ստուգում: Գազապարիչ սարքերի և նրանց առանձին հանգույցների, չափիչ-հսկիչ սարքերի զննում, առկա օդափոխիչ սարքերի և ծխաօդատար ուղիների քարշի ստուգում: Տեխնիկական ստուգման եզրակացության, կամ ակտի տրամադրում: | 1 | դրամ | 72000 | Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Սպանդարյան 24/1, 24/2<br>Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության 1 | Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| տեխնիկական ստուգման ծառայություններ-5 CPV՝ 71631100/7 | Գազասարքերի ծխատար խողովակների հավաքակցման, ծխատար ուղուն միացման օդափոխության և այրման համար անհրաժեշտ օդաքանակի ներհոսքի զննում, օդամղիչների և դրանց էլեկտրաշարժիչների աշխատանքի փաստացի վիճակի ստուգում, կաթսաների որմնապատվածքի կամ երեսվածքի, պայթեցման կափույրների, ձգափականների սարքինության ստուգում: Գազասպառիչ սարքերի և նրանց առանձին հանգույցների, չափիչ-հսկիչ սարքերի զննում, առկա օդափոխիչ սարքերի և ծխաօդատար ուղիների քարշի ստուգում: Տեխնիկական ստուգման եզրակացության, կամ ակտի տրամադրում: | 1 | դրամ | 108000 | Տավուշի մարզ, ք. Իջևան, Անկախության 12<br>Տավուշի մարզ, գ. Բագրատաշեն 19 փ. թիվ 69<br>Տավուշի մարզ, գ. Այրում, Երկաթուղայինների 20 | Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում |
| տեխնիկական ստուգման ծառայություններ-6 CPV՝ 71631100/8 | Գազասարքերի ծխատար խողովակների հավաքակցման, ծխատար ուղուն միացման օդափոխության և այրման համար անհրաժեշտ օդաքանակի ներհոսքի զննում, օդամղիչների և դրանց էլեկտրաշարժիչների աշխատանքի փաստացի վիճակի ստուգում, կաթսաների որմնապատվածքի կամ երեսվածքի, պայթեցման կափույրների, ձգափականների սարքինության ստուգում: Գազասպառիչ սարքերի և նրանց առանձին հանգույցների, չափիչ-հսկիչ սարքերի զննում, առկա օդափոխիչ սարքերի և ծխաօդատար ուղիների քարշի ստուգում: Տեխնիկական ստուգման եզրակացության, կամ ակտի տրամադրում: | 1 | դրամ | 36000 | Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Նար-Դոս 11 | Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| տեխնիկական ստուգման ծառայություններ-7 CPV՝ 71631100/9 | Գազասարքերի ծխատար խողովակների հավաքակցման, ծխատար ուղուն միացման օդափոխության և այրման համար անհրաժեշտ օդաքանակի ներհոսքի զննում, օդամղիչների և դրանց էլեկտրաշարժիչների աշխատանքի փաստացի վիճակի ստուգում, կաթսաների ոդմնապատվածքի կամ երեսվածքի, պայթեցման կափույրների, ձգափականների սարքինության ստուգում: Գազասպառիչ սարքերի և նրանց առանձին հանգույցների, չափիչ-հսկիչ սարքերի զննում, առկա օդափոխիչ սարքերի և ծխաօդատար ուղիների քարշի ստուգում: Տեխնիկական ստուգման եզրակացության, կամ ակտի տրամադրում: | 1 | դրամ | 36000 | Արարատի մարզ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23 փ. 83 | Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում |
| տեխնիկական ստուգման ծառայություններ-8 CPV՝ 71631100/10 | Գազասարքերի ծխատար խողովակների հավաքակցման, ծխատար ուղուն միացման օդափոխության և այրման համար անհրաժեշտ օդաքանակի ներհոսքի զննում, օդամղիչների և դրանց էլեկտրաշարժիչների աշխատանքի փաստացի վիճակի ստուգում, կաթսաների ոդմնապատվածքի կամ երեսվածքի, պայթեցման կափույրների, ձգափականների սարքինության ստուգում: Գազասպառիչ սարքերի և նրանց առանձին հանգույցների, չափիչ-հսկիչ սարքերի զննում, առկա օդափոխիչ սարքերի և ծխաօդատար ուղիների քարշի ստուգում: Տեխնիկական ստուգման եզրակացության, կամ ակտի տրամադրում: | 1 | դրամ | 144000 | Սյունիքի մարզ, ք. Կապան, Ռ. Մինասյան 20ա<br>Սյունիքի մարզ, ք. Գորիս, Տաթևացի 9<br>Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Սիսական 41գ<br>Սյունիքի մարզ, գ. Կարճևան, Մայրուղի 4 | Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | տեխնիկական ստուգման ծառայություններ-9 CPV՝ 71631100/6 | Գազասարքերի ծխատար խողովակների հավաքակցման, ծխատար ուղուն միացման օդափոխության և այրման համար անհրաժեշտ օդաքանակի ներհոսքի զննում, օդամղիչների և դրանց էլեկտրաշարժիչների աշխատանքի փաստացի վիճակի ստուգում, կաթսաների որմնապատվածքի կամ երեսվածքի, պայթեցման կափույրների, ծգափականների սարքինության ստուգում: Գազասպառիչ սարքերի և նրանց առանձին հանգույցների, չափիչ-հսկիչ սարքերի զննում, առկա օդափոխիչ սարքերի և ծխաօդատար ուղիների քարշի ստուգում: Տեխնիկական ստուգման եզրակացության, կամ ակտի տրամադրում: | 1 | դրամ | 72000 | Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Հերոս քաղաք Նովոռոսիյսկի 4 Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Սայաթ-Նովա 1/1 | Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում |
| | տեխնիկական ստուգման ծառայություններ-10 CPV՝ 71631100/13 | Գազասարքերի ծխատար խողովակների հավաքակցման, ծխատար ուղուն միացման օդափոխության և այրման համար անհրաժեշտ օդաքանակի ներհոսքի զննում, օդամղիչների և դրանց էլեկտրաշարժիչների աշխատանքի փաստացի վիճակի ստուգում, կաթսաների որմնապատվածքի կամ երեսվածքի, պայթեցման կափույրների, ծգափականների սարքինության ստուգում: Գազասպառիչ սարքերի և նրանց առանձին հանգույցների, չափիչ-հսկիչ սարքերի զննում, առկա օդափոխիչ սարքերի և ծխաօդատար ուղիների քարշի ստուգում: Տեխնիկական ստուգման եզրակացության, կամ ակտի տրամադրում: | 1 | դրամ | 36000 | Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Պռոշյան 29 | Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| տեխնիկական ստուգման ծառայություններ-11 CPV՝ 71631100/12 | Գազասարքերի ծխատար խողովակների հավաքակցման, ծխատար ուղուն միացման օդափոխության և այրման համար անհրաժեշտ օդաքանակի ներհոսքի զննում, օդամղիչների և դրանց էլեկտրաշարժիչների աշխատանքի փաստացի վիճակի ստուգում, կաթսաների որմնապատվածքի կամ երեսվածքի, պայթեցման կափույրների, ծգափականների սարքինության ստուգում: Գազասպառիչ սարքերի և նրանց առանձին հանգույցների, չափիչ-հսկիչ սարքերի զննում, առկա օդափոխիչ սարքերի և ծխաօդատար ուղիների քարշի ստուգում: Տեխնիկական ստուգման եզրակացության, կամ ակտի տրամադրում: | 1 | դրամ | 36000 | Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Նարեկացի 8/3 | Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում |

*ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

**Տեխնիկական ստուգման փորձաքննության եզրակացության կամ ակտի տրամադրման ժամկետը՝ փորձաքննության ավարտից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:**

**Կատարողը ծառայության մատուցման ընթացքում պետք է ներկայացնի Հայաստանի հավատարմագրման ազգային մարմնի կողմից տրված հավատարմագրման վկայագիր:**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
900011054013
02647057
Էդգար Գևորգյան

-----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ
ք.Երևան, Ազատության պող. 24- 306
«ՀայԷկոնոմԲանկ» ԲԲԸ, Արաբկիրի մ/ճ,
163058801172
00144521
Լենիդ Բեգլարյան

-----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 15 » 10 2020թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/8 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ...րավերով ...ատեսված ...փաբաժնի ...ամարը | Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը* | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
| | | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը** |
| 1 | 4239 | **71631100/3** | Տեխնիկական ստուգման ծառայություններ-1 | | | | | | | | | | 396000 | 396000 | 396000 | **396000** |
| 2 | 4239 | 71631100/4 | Տեխնիկական ստուգման ծառայություններ-2 | | | | | | | | | | 108000 | 108000 | 108000 | **108000** |
| 3 | 4239 | 71631100/5 | Տեխնիկական ստուգման ծառայություններ-3 | | | | | | | | | | 144000 | 144000 | 144000 | **144000** |
| 4 | 4239 | 71631100/11 | Տեխնիկական ստուգման ծառայություններ-4 | | | | | | | | | | 72000 | 72000 | 72000 | **72000** |
| 5 | 4239 | 71631100/7 | Տեխնիկական ստուգման ծառայություններ-5 | | | | | | | | | | 108000 | 108000 | 108000 | **108000** |
| 6 | 4239 | 71631100/8 | Տեխնիկական ստուգման ծառայություններ-6 | | | | | | | | | | 36000 | 36000 | 36000 | **36000** |

| | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | 4239 | 71631100/9 | Տեխնիկական ստուգման ծառայություններ-7 | | | | | | | | | | 36000 | 36000 | 36000 | **36000** |
| 8 | 4239 | 71631100/10 | Տեխնիկական ստուգման ծառայություններ-8 | | | | | | | | | | 144000 | 144000 | 144000 | **144000** |
| 9 | 4239 | 71631100/6 | Տեխնիկական ստուգման ծառայություններ-9 | | | | | | | | | | 72000 | 72000 | 72000 | **72000** |
| 10 | 4239 | 71631100/13 | Տեխնիկական ստուգման ծառայություններ-10 | | | | | | | | | | 36000 | 36000 | 36000 | **36000** |
| 11 | 4239 | 71631100/12 | Տեխնիկական ստուգման ծառայություններ-11 | | | | | | | | | | 36000 | 36000 | 36000 | **36000** |

*րման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
900011054013
02647057
Էդգար Գևորգյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ
ք.Երևան, Ազատության պող. 24- 306
«ՀայԷկոնոմԲանկ» ԲԲԸ, Արաբկիրի մ/ճ,
163058801172
00144521
Լեոնիդ Բեգլարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« 15 » 10 2020թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/8 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
____________________
____________________
գտնվելու վայրը ____________
հհ ____________________
հվհհ ____________________

Պատվիրատու
____________________
____________________
գտնվելու վայրը ____________
հհ____________________
հվհհ____________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
____________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
____________________
ստորագրություն
____________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» 00144521

Ծառայությունն ընդունեց
____________________
ստորագրություն
____________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
«15» 10 2020թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/8 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ___________-ի
Պատվիրատուի անունը / Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ________________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը / պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_______________________
ազգանուն, անուն
_______________________
ստորագրություն

«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ»
00144521

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_______________________
ազգանուն, անուն
_______________________
ստորագրություն